

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

23.11.2012թ.

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 82-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, ԱԺ պատգամավոր Մանվել Բադեյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարսեղյանը:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքներում սեփական եկամուտների կատարման վիճակի և առաջնահերթ խնդիրների մասին:
/Զեկ. Ա. Սահակյան – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ/
2. Մարզում հրատապ ծրագրերով իրականացվող աշխատանքների մասին:
/Զեկ. Ա. Զոհրաբյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ/
3. Անձնավորված հաշվառման մասին:
/Զեկ. Ի. Ասատրյան – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ/
4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

- Գ. Բադալյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Վ. Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝
 - 1) մինչև ս/թ. դեկտեմբերի 31-ը ապահովել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները 100օ/օ-ի չափով.
 - 2) պետական բյուջեից տրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ավելացման և սեփական եկամուտների հավաքագրման հաշվին առաջնահերթությամբ մարել նախորդ տարիներից կուտակված աշխատավարձի պարտքերը և սոցվճարները.
 - 3) ուշադրություն դարձնել <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> ՀՀ օրենքի /ընդունված 21.03.2012թ./ կիրարկմանը այն հաշվով, որ մինչև ս/թ. դեկտեմբերի 31-ը կուտակված ապառքների գանձումը կատարվի այնպես, որ յուրաքանչյուր պարտք ունեցող քաղաքացի օգտվի օրենքով սահմանված արտոնություններից: Սույն օրենքի կիրարկման ընթացքի մասին ամբողջական ծավալով տեղեկատվություն ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 8-ը.
 - 4) աշխատավարձի և սոցվճարների պարտքերի մարման վերաբերյալ փոփոխություններով տեղեկատվությունը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 8-ը.
 - 5) համայնքների 2013 թվականի բյուջեները ձևավորել իրատեսական՝ հաշվի առնելով հողի հարկի, գույքահարկի և առկա ապառքների ելակետային տվյալները, ինչպես նաև <<Եկամտային հարկի մասին>> ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում պահպանել համայնքի ղեկավարի աշխատակազմի, ՀՈԱԿ-ների և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի նախորդ տարվա չափը.
 - 6) ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1392-Ն որոշմամբ պետական բյուջեից մարզին հատկացված գումարներով առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները լուծելու համար շինարարական և հիմնանորոգման ծրագրեր կիրականացվեն միայն այն համայնքներում, որոնք սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները նոյեմբերի 1-ի դրությամբ ապահովել են 90օ/օ-ի չափով.

- 7) համայնքային ենթակայության ճանապարհների ձմեռային պահպանություն իրականացնելու նպատակով սպասարկող կազմակերպությունների հետ կնքել համապատասխան պայմանագրեր.
- 8) քաղաքապետարանների և գյուղապետարանների շենքերի վրա պարտադիր ամրացնել կամ փոխել խունացած ՀՀ պետական դրոշը և մուտքերի մոտ՝ տեղական ինքնակառավարման մարմնի անվան ցուցանակը.
- 9) ուշադրություն դարձնել համայնքի ղեկավարի աշխատակազմում կարգապահական կանոնների պահպանման վրա.
- 10) համայնքների ղեկավարների աշխատակազմերում կադրերին աշխատանքի նշանակել և ազատել առաջնորդվելով աշխատանքային օրենսգրքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքներով.
- 11) հանրակրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների ցուցակը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ